Adishian stated, "Stories like this remind us all of the deep ties, the immense contribution, and the heart that Armenians have given in the Central Valley. It is so important to preserve these types of stories for our future generations, and for there to be a place designated for these stories to live, to be shared, and to be learned." She commended those present for their support of the Armenian Cultural Conservancy which represents a collective endeavor toward an enduring institution of learning. "The Armenian footprint in the Central Valley has made a deep and positive impact since the 1890s. While the Armenian legacy lives on in us as individuals, it also lives on in our institutions to preserve our cultural heritage. I know the Conservancy will showcase that legacy for posterity."

Both Rettig and Maranian-Adishian, the grandchildren of genocide survivors, agree that the Conservancy will be a valuable receptacle from which young Armenians, as well as community members at large, can learn more about their identity and also explore the richness that an ancient heritage has to offer in today's modern world.

The second annual banquet of

Seta Kabranian-Melkonian to Present New Book Dedicated to Two Martyrs

GLENDALE - Author Seta Kabranian-Melkonian will be in town to present her new book in Armenian dedicated to martyrs Garlen Ananian and Aram Vartanian titled, *Nvirialnere* (The Consecrated Ones) on Friday, October 13, 2017 at 7:30pm at Abril Bookstore - 415 E. Broadway, Glendale, CA. Speakers include Markar Melkonian. Admission is free with reception to follow. Priority Reserved seating available at <http://www.itsmyseat.com/AbrilBooks>

Garlen Ananian was only twenty years old when he was martyred, and his comrade Aram Vartanian was barely twenty-one. Garlen was born and raised in Urmia, Iran, and Aram was born in Amman Jordan. These two young men came from very different backgrounds, but they shared the highest ideals and hopes of the brightest young men and women of their generation of diasporan Armenians. Their life stories, though short, are inspiring. Seta Kabranian-Melkonian describes the long roads of their short lives.


Seta Kabranian-Melkonian received her doctorate in Armenian literature from Yerevan State University in 1996. She has authored many articles about the Republic of Armenia and the diaspora, and she is co-author, with Markar Melkonian, of the biography *Avo: The Life and Death of Monte Melkonian* (Yerevan 2007).

Why did you kill? The answer to

the Armenian Cultural Conservancy was co-sponsored by the Foreign Language Department of FCC and Heritage Fresno.

The Educational Employees Credit Union and the Daughters of Vartan - Fresno Alidz Chapter were major Corporate Sponsors; and Banquet Sponsors included: Midge & Charles Barrett, Mary & Alain Ekmalian, Edward V. Hagopian & Raffi Dorian, Margaret & Paul Hokokian, Edward M. Kashian, Sue & Mike Kilijian, Lee & Don Leone (In Memory of Brother Vartan Torosian), Arpini Mirigian, Walter Vosganian and the National Raisin Company.

ACC's ad hoc committee members are: Chuck and Midge Barrett, co-chairs; Linda Hamilton, treasurer; Gary Becker, secretary; Mike Kilijian,



the question is in the book. But it's no longer a question. It's anguish that unsettles the reader while turning the pages of this tragic narrative nonfiction told in fragmented memoirs. - Vahan Ishkhanian

Parallel to the tragic events shines the idealism of a generation we were part of. With excerpts from personal letters the author accentuates the contrast between circumstances. A narrative full of characters reflecting both humanism and misanthropy, that generates as much abhorrence as it emphasizes the presence of hope. - Hourig Attarian

Presented by Abril Bookstore.

banquet chair; Dn. Allan Y. Jendian, program and public relations; Mary Ekmalian, newsletter editor and invitations; Margaret Hokokian, membership and decorations; Helen Moordigian, decorations, Herb Arden, mailing; and Larry Johnson and Dn. Van Der Mugrdechian, website.

The reception committee and mezze contributors were Midge Barrett, Mary Ekmalian, Margaret Hokokian, Rosemary Jendian, Mike Kilijian, Helen Moordigian, Barbara Mortanian and Patty Torosian.

Fresno's Armenian Cultural Conservancy, a 501(c)(3) nonprofit, community benefit organization, welcomes your membership. For further information call (559)226-1984 or visit our website: <http://armenianculturalconservancy.org/>.

EU and Armenia to Sign Groundbreaking Deal

Continued from page 1

deal is due to be signed at the EU's November 24 summit in Brussels that will focus on its Eastern Partnership program of privileged partnership with six former Soviet republics.

"Armenia has close links with the EU and intends to expand comprehensive cooperation in all areas of mutual interest," Nalbandian said. "The EU provides valuable assistance to reforms taking place in our country."


The EU Delegation in Armenia said over the weekend that Hahn will visit Yerevan to "prepare for" the Brussels summit. The commissioner was scheduled to meet with President Serzh Sarkisian and Prime Minister Karen

Karapetian later on Monday.

The CEPA, which was finalized in March, reportedly contains the main political provisions of a more far-reaching Association Agreement which Brussels and Yerevan nearly concluded in 2013. Sarkisian prevented the signing of that agreement with his unexpected decision to seek Armenia's accession to the Russian-led Eurasian Economic Union. The move was widely attributed to Russian pressure exerted on the Armenian government.

Speaking in August, the Armenian president dismissed suggestions that the planned alternative deal with the EU may also collapse at the last minute. "We have no reason to not sign that document," he said of the CEPA.

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԴՈՎԵՂ ԳԻՒԴԻ ՓՈՂՈՑՆԵՐՈՒ ԼՈՒՍԱԴՈՐԵԼՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ



ԹԱԹՈՒԼ ՅԱՎՈՐԵԱՆ

Սեպտեմբեր 27-ին հայկական բազմաթիվ լրատվամիջոցներ հաղորդագրություն են տարածել, ընդ որում նոյնանման բովանդակությամբ, որ Վալրի բնութեան եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) եւ ՎիվաՍել-ՄՏՍՍ-ի համագործակցությամբ իրականացվող «Այլընտրանքային էներգիա» նախագծի շրջանակում, Տավուշի մարզի սահմանային Դովեղ գիւղի փողոցները լուսավորվել են:

Հաղորդագրություն հենց առաջին պարբերությունում մեջ առնում է. «Տավուշի մարզի Դովեղ գիւղն արեւելեան մասով 15 կմ երկարությամբ սահման ունի հարեւան երկրի հետ: Չնայած անհրաժեշտությամբ՝ սահմանապահ գիւղը տարիներ շարունակ ստիպուած է եղել յարմարուել արտաքին լուսավորության համակարգի բացակայությանը»:

Այս տեղեկատվությունը իրականությունը չի համապատասխանում. Դովեղ գիւղի փողոցները լուսավորվում էին արդէն 4 տարի անընդմէջ, առանց խափանման:

Տարիներ առաջ ես իմ ծննդավայրի, աւելի ճիշտ՝ Դովեղի եւ հարեւան Քամաուլու (Ադրբեջան) գիւղի միջեւ 1984 թվականին տեղի ունեցած ազգամիջեան բախման մասին մի յօդուած էի գրել Պէյրուսի հայկական թերթերից մէկում: Յօդուածը լայն արձագանք էր գտել: Հերթական անգամ, երբ Պէյրուսում էի, ինձ հարցրեցին, թէ ինչպէս կարող են օգնել այդ գիւղին: Ասացի, որ անկախութեան առաջին տարիներին, էներգետիկ ճգնաժամի պատճառով, գիւղի փողոցային լուսավորութիւնը դադարեցուել է եւ լաւ կլինի, որ սահմանից 1 կիլոմետր հեռավորութեան վրայ գտնուող գիւղը կրկին լուսավորուի:

Պէյրուսից բարերար Բյուզանդ Գէորգեանը անմիջապէս արձագանքեց: Նա ինձ առաջարկեց հաշուարկել, թէ որքան գումար է անհրաժեշտ: Գյուղապետ Սամվել Գորգինեանի հետ միասին մենք անցանք գիւղի հիմնական փողոցներով եւ որոշեցինք, որ 52 լապտերը բաւարար է գիւղը լուսավորելու համար: Կարելի էր աւելի շատ տեղադրել, բայց աւելի շատը նշանակում էր աւելի շատ գումար վճարել օգտագործուած էներգիայի համար, ինչին գիւղապետարանի սուղ բյուջէն պատրաստ չէր:

Մեր հաշուարկները ցոյց տուեցին, որ ամբողջ աշխատանքի համար անհրաժեշտ է ընդամենը 6.500 դոլար, քանի որ խորհրդային տարիներին ներդրուած փողոցային լուսավորութեան համակարգը մասամբ պահպանուել էր, մասնաւորապէս՝ սիւների մեծագոյն մասը:

Բիւզանդ Գէորգեանը անմիջապէս առձեռն փոխանցեց այդ գումարը, եւ երկու ամսուայ ընթացքում, գիւղի փողոցային լուսավորութիւնը, 1992-ից ի վեր առաջին անգամ վերականգնուեց: 6500 դոլարից խնայուեց եւս որոշակի գումար, որն ուղղուեց էլեկտրաէներգիայի վճարների մի քանի ամիսների սպասարկմանը:

Այստեղ ուզում եմ անպայման նշել, որ Դովեղի փողոցային լուսավորութիւնը խորհրդային տարիներին հնարաւոր է եղել իրականացնել գյուղացիներից Մերգեյ Ավագյանի անմիջական նախաձեռնութեամբ: Մերգեյ Աւագեանը աշխարհահռչակ շախմատիստ Լեւոն Արոնեանի հարազատ քեռին է:

Այսպիսով, երբ հաղորդագրութիւն է տարածուել, թէ «սահմանապահ գիւղը տարիներ շարունակ ստիպուած է եղել յարմարուել արտաքին լուսավորութեան համակարգի բացակայությանը», դա անխիղճ վերաբերմունք է եւ՝ Մերգեյ Աւագեանի, եւ՝ Բիւզանդ Գէորգեանի նկատմամբ:

Ի դէպ, երբ Բիւզանդ Գէորգեանին առաջարկեցի, որ իր բարերարութեան մասին լրատվամիջոցների համար մի փոքրիկ տեղեկատուութիւն պատրաստեմք եւ տարածենք, նա կարեւորութիւն է տուեց: Բաւարարուեցի ընդամենը Ֆէյսբուքի մի ստատուսով:

Գէորգեանը տասնամեակներ շարունակ միլիոնաւոր տոլարներ էր օգնութիւններ է տրամադրել եւ ներդրումներ կատարել Արցախում, Հայաստանում եւ Սփիւռքում: Յատկապէս սիրիական պատերազմի տարիներին, նա բազմաթիւ ընտանիքների է օգնել ամիսներ շարունակ: Այդ բարեգործութիւնների մասին շատ չեն գրուել, քանի որ մարդը գովազդի կարիք չուներ:

Յանուն արդարութեան պէտք է նշել, որ, այո՛, Դովեղում ներդրուած նոր համակարգի շնորհիւ գիւղի փողոցային լուսավորութիւնը նախկինի համեմատ շատ աւելի լաւն է, շատ աւելի արդիական:

Հենց այս պահին, երբ գրում եմ այս յօդուածը, իմ լուսամուտից տեսնում եմ, որ մեր գիւղի փողոցները աւելի լաւ են լուսավորուած:

ները աւելի լաւ են լուսավորուած: *****

Վերջում ներկայացնենք այն հաղորդագրութիւնը, որ տարածել են լրատվամիջոցները.

«Տավուշի մարզի Դովեղ գիւղն արեւելեան մասով 15 կմ երկարությամբ սահման ունի հարեւան երկրի հետ: Չնայած անհրաժեշտությամբ՝ սահմանապահ գիւղը տարիներ շարունակ ստիպուած է եղել յարմարուել արտաքին լուսավորութեան համակարգի բացակայությանը:

Ներկայումս իրավիճակը փոխուել է. համայնքների զարգացումը կարելու առաջնահերթութիւն համարող գործընկեր կառուցների ջանքերով խնդիրը լուծուել է:

Վալրի բնութեան եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) եւ ՎիվաՍել-ՄՏՍՍ-ի համագործակցությամբ իրականացուող «Այլընտրանքային էներգիա» նախագծի շրջանակում, Դովեղում ամբողջութեամբ ստեղծուել է արտաքին լուսավորութեան էներգիանայող նոր ենթակառուցուածք: Տեղակայուել է 73 LED լուսարձակ՝ լուսավորելով 2700 մ երկարությամբ տարածութիւն:

Համակարգի գործարկմանը մասնակցել են ՎիվաՍել-ՄՏՍՍ-ի գլխաւոր տնօրէն Ռայֆ Երիկեանը, FPWC հիմնադրամի գլխաւոր ճարտարագէտ, ծրագրի պատասխանատու Մարտին Մարալչեանը, Նոյեմբերեան համայնքի ղեկավար Կարեն Աբագեանը եւ համայնքի բնակիչները:

«Գիւղական համայնքներում ենթակառուցուածքների զարգացումն առաջնահերթութիւն է: Յատկապէս սահմանապահ գիւղերում դրանց կառուցումը կարելու է մի քանի տեսանկիւնից. գիւղն սկսում է համապատասխանել ժամանակի

պահանջներին, բնակիչը փորձում է լաւատեսորէն նայել վաղուա օրուան, գյուղի զարգացման հեռանկարին ու մնալ իր բնօրրանում եւ, որն ամենակարեւորն է՝ լուծուել է մարդկանց անվտանգութեան հարցը: Իսկ մեզ՝ գործընկեր կառուցներիս համար, արձանագրուող ձեռքբերումներին զուգահեռ, ծրագիրն արժեւորուել է նաեւ երկարաժամկէտ արդիւնքով», - ասել է ՎիվաՍել-ՄՏՍՍ-ի գլխաւոր տնօրէն Ռայֆ Երիկեանը:

Բնապահպանական եւ էներգիանայող LED լուսարձակների շահագործումը տնտեսապէս արդիւնաւէտ է բյուջետային համեստ միջոցներ ունեցող գիւղերի համար: Այսպիսի համակարգի շահագործումն էականորէն կրճատուել է էներգիայի ծախսը՝ խնայուած միջոցների հաշուին թեթեւացնելով գիւղի ֆինանսական բեռը:

Ի տարբերութիւն այլ լամպերի՝ LED լամպերն առաւել արդիւնաւէտ ու դիմացկուն են, կարող են անհամեմատ աւելի երկար ծառայել՝ սպառելով 80%-ով պակաս էլեկտրաէներգիա:

Դովեղի փողոցները կը լուսավորուեն ամռանը՝ 21:00-ից մինչեւ 02:00, իսկ ձմռանը՝ 18:00-ից մինչեւ 01:00: Տօնական օրերին լուսավորութիւն կապահովուի նաեւ ամբողջ գիշեր:

Մէկ տարի առաջ, ի թիւս Բաղանիս, Բարեկամավան, Բերդավան, Կոթի, Ոսկեպար, Ոսկեվան, Ջուշեան գիւղերի, Դովեղը ընդգրկուել է Տավուշի մարզի ընդլայնուած՝ Նոյեմբերեան համայնքի կազմում:

Դովեղում ապրում է 185 ընտանիք: Բնակիչները հիմնականում զբաղուել են բուսաբուծութեամբ, այգեգործութեամբ եւ անասնապահութեամբ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹ՝ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԵԱՆՔ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՍՔ



ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ԾԵՊԵՏԵԱՆ

Ըստ Մէքս Ուէպլըրի, մշակույթը ընկերային գիտություն է, որ կ'առնչուի առաւելաբար հաւաքականութեան մը տուեալներուն հետ, եւ որուն միջոցաւ մարդիկ կ'ապրին իրենց կեանքերը նոյնինքն այդ տուեալներուն մէջ եւ մէջէն, եւ որ իրենց համար կը դառնայ իւրաքայտուկ:

Եւ այս իմաստով, ձոն Սթորի կը բացատրէ, մշակույթը չի կրնար ունենալ մէկ եւ միայնակ մօտեցում այն բոլոր հիմնահարցերուն, որուն հետ ան կ'առնչուի, որովհետեւ իւրաքանչիւրը ունի իր հասկացողութիւնը եւ ըմբռնումը: Եւ ասկէ կարելի է մեկնարկել այն հասկացողութիւնը, թէ մշակույթը կը վերլուծէ կեանքը կազմող շատ մը բնագաւառները, որոնք կ'առնչուին նոյն այդ հաւաքականութեան տեսադաշտերուն, մտահորիզոններուն եւ ըմբռնումներուն, եւ որ նաեւ կը ստեղծէ արժէք եւ սովորութիւն նոյնինքն այդ հաւաքականութեանը:

Եւ այս իմաստով, այս տեսադաշտերը եւ ըմբռնումները կը դառնան կեանքի ուղի տուեալ այդ հաւաքականութեան, եւ ինչ որ կը վերածուի ամբողջական մշակույթի բնորոշումին, որուն մէջ կը պարփակուի գաղափար, կեցուածք, լեզու, վարուելակերպ, կազմակերպչական կառուց բայց նաեւ արուեստի սովորութիւններ ինչպէս գրականութիւն, երգ, ճարտարապետութիւն եւ այլն: Այս խորքով, Մէքս Ուէպլըր կը պնդէ, հաւաքականութեան մը մաս կազմող մարդիկ կը դառնան մշակույթի եւ մշակութային էակներ՝ գինուած մշակութային այդ արժէքներով, եւ որ պիտի օգնէ իւրաքանչիւրը կերտելու համար իր կեցուածքը աշխարհի նկատմամբ բայց նաեւ շինելու համար նպատակ-իմաստ իր կեանքի բոլոր տուեալներուն մէջէն:

Ահա թէ ինչն էր նաեւ, որ որպէս հայ ժողովուրդ, մենք կորսնցուցինք Յեղասպանութեան ժամանակ եւ ատկէ վերջ: Եթէ մեծ թիւով մարդկային հոգի, աշխարհագրական հողատարածք եւ կառուցներ, բայց նաեւ կեանքին մէջ մեզի իւրաքայտուկ այս ամբողջական մշակույթը: Ատալեան այսպէս կը բացատրէ պատահածը՝

Երբ հայկական հողը դատարկուեցաւ իր ժողովուրդէն, անոր մշակութային բոլոր լծակները՝ դպրոց, վանք, արուեստի կոթող եւ պատմական վայրեր՝ կործանեցան

Օսմանեան կառավարութեան կողմէ: Մէկ տարուան մը ընթացքին հայը կորսնցուց իր երեք հազարամեայ պատմութեան ժառանգը:

Հայը կրցաւ պահել միայն այն, որ կու գար իր հաւաքական յուշերէն: Եւ յուշերուն մէջ կար իր լեզուն, բանաստեղծութիւնը, երգը եւ ողբերգական ճակատագիրը՝ իբրեւ հայուն եւ իրենց մնացած մշակույթ:

Եւ այս հաւաքական յուշերուն մէջէն է, որ հայը վերստեղծեց իր ամբողջական մշակույթը եւ կառուցեցաւ անոր, որպէս ապրելու գրաւական եւ հիմք: Եւ այս ունի իր գիտական ենթահողը:

Ռիչըրտ Յովհաննիսեան կը հաւատայ, թէ Յեղասպանութիւնը հայուն համար դարձաւ ինքնութեան հաւատարմութեան պահպանումը: Եւ այս իմաստով Յեղասպանութիւնը նոյն հայուն տուաւ պատկանելիութեան գիտակցութիւն, մշակութային վերածնունդ եւ պատմութեան շարունակականութիւն: Փիթըր Պալաքեան կ'ըսէ, թէ Յեղասպանութիւնը կերտեց ու տակաւին՝ հայուն հաւաքական ինքնութիւնը: Ազգային, համազգային, կրօնական, գաղափարախօսական, քաղաքական, ընկերա-տնտեսական եւ սերնդական տարբերութիւններ

րով հանդերձ, Յեղասպանութեան այս ինքնութիւնը դարձաւ ու կը կը դառնայ հասարակ յայտարարը՝ միացնելով բոլորը: Ահա, թէ ինչու հայուն հայկական մշակույթը՝ իր այս ամբողջական հասկացողութեան մէջէն, հայուն կը շնորհէ ոչ թէ միայն ամբողջական կեանք բայց նաեւ շարունակականութեան հիմք:

Եւ սկսաւ հայուն շարունակականութեան այս կեանքը սփիւռքեան իր նոր «հայրենիքներուն» մէջէն եւ պայքարը իր ամբողջական մշակույթի պահպանումին համար: Յեղասպանութեան անմիջապէս ետք կազմուած հայկական սփիւռքեան գաղութները հայախօս էին: Անոնք ստեղծած էին կեթոններ, ուր փոքրիկ հայաստաններ շինելով իրենք իրենց կեանքերը կը տնօրինէին:

Նոյնը չէ պարագան այսօր: Հայկական գաղութները շատ աւելի յարաբերութեան մէջ են իրենց ապրած տեղական մշակույթներուն եւ միջնորդներուն հետ: Եւ ասոր հակադրեցութիւններն են

Շար.ը էջ 18

**Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ
Գերբ. Տ. Յովնան արք. Տէրտէրեան
եւ
Արեւմտեան թեմի Տիկնանց Միութիւնը սիրով ձեզ կը հրաւիրեն**

ՀԱՅԿԱԿԱՆՈՅՑ ՍԱԶԵԱՆ-ԳՐԳԱՇԱՐԵԱՆԻ

**HADJIN,
IF WE FORGET YOU...**

անգլերէն հատորի շնորհանդէսին

**Հատորը կ'ամփոփէ Հաննայ 1909-1920 թուականներու
ողբերգական պատմութիւնը՝ 1915-ի տարագրութեան եւ
1920-ի երեսամարտի վերապրողներու վկայութեան ընդմէջէն**

**ՆԵՐԿԱՅ Կ'ԸՂՅԱՅ ԵՒ ԽՕՍԲ Կ'ԱՌԻՆԷ ՀԵՂԻՆԱԿԸ՝ ԹԱՏԿԱՊԷՍ ՀՐԱԻՐՈՒԱԾ ՓԱՐԻՁԻՆ
ԳԻՐՔԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅԻՆԷ ԹԱՐԳՄԱՆԻՉԸ՝ ԴՈԿՏ. ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ (Ն.Ի. ձըրգի)**

«ՀԱՅՈՑ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՅԱՆՁԱՏԻՐՈՒԹԻՒՆ» ԲԱԶՄԱԼԵԶՈՒ ԳԻՐՔԸ


Ռ. ԿՈՐԻԻՆ

Հայ ժողովրդի տառապանքների, կոտորածների - ցեղասպանութեան մասին ժամանակին եւ նրանից յետոյ անհամար գրքեր են գրուել՝ ականատեսի վկայութիւններ, մագապուրծ փրկուածների յուշեր, վիշտ ու կսկիծ արտայայտող պատմամաներ, պատմական ուսումնասիրութիւններ... 1915-ի եղեռնի ոգեկոչման բազմազար ժողովրդի պահանջատիրութեան ցոյցեր եւ քայլարշաւներ են տեղի ունեցել ու ցեղասպանութիւնը պատկերող կինո-ժապաւններ են պատկերահանուել հայերէնով եւ օտար լեզուներով, անհերքելի փաստեր եւ հազարաւոր կենդանի վկայութիւններ, դեռ աւելի կազմակերպուած եւ վճռակամ շարունակուելու են մինչեւ թուրքիոյ ղեկավարները առերեսուեն իրենց պատմութեան հետ եւ ընդունեն ցեղասպանութիւնը:


Ներկայացուած է ստուարածաւալ առանձնաշատու գիրք բաղկացած 738 էջերից, հրատարակուել է 2016-ին իր մէջ ընդգրկելով արաբերէն բնագրից թարգմանուած եօթ լեզուներով՝ Արեւելահայերէն եւ Արեւմտահայերէն տարբերակներով, անգլերէն, ֆրանսերէն, ռուսերէն, գերմաներէն եւ պարսկերէն՝ պարունակելով արաբերէն բնագիրը եւ պատմական նկարներ:

Արաբերէն բնագրի հեղինակ՝ Շէյխ Ֆայզ ալ Ղոսէյն, արաբ մահմեդական, իր ականատեսի վկայութիւններով գրի է առել հայերի 1915 թուի սահմուկեցուցիչ անմարդկային ջարդերը, անշուշտ սա առաջինը է, այլ ժամանակակից օտարականներ եւս մարդասիրական խոր գիտակցութեամբ կատարել են այդ առաքելութիւնը: Հեղինակի օտարական լինելը՝ ի մասնաւորի ազգութեամբ արաբ եւ կրօնով մուսուլման, մեզ համար կարեւորութիւն է ներկայացնում մուսուլման աշխարհին քաջալերելու ճանաչեն հայոց 1915 թ. ողբերգութիւններն ու անմեղ ժողովրդի կոտորածները թուրքիայում պետականօրէն ծրագրուած ու գործադրուած, հայաշինջ քաղաքականութիւն այս գրքի վկայութեամբ, որը հեղինակը գրի է առել 1916 թ.:

Գիրքն ամբողջութեամբ հայերի կոտորածների մասին է, թէ ինչպէս երիտասարդութեան առանձնացրեցին խումբ-խումբ գնդակահարելով, կանանց, երեխաներին, տարեց մարդկանց, խորհրդարանի երեսփոխաններին, երեւելի գրողներին, մտաւորականներին, հասարակական գործիչներին, հոգեւորականներին եւ բոլոր-բոլորին անխճօրէն սրախոխող անուամբ, քարկոծում, գնդակահարում, չարչարելով անդամահատում, տանջանքների ենթարկում, ծովն ու գետերը թափելով ջրամոյց անում կամ անապատները քշելով սովից ու ծարաւից մահուան ենթարկում՝ թալանելով ու կողոպտելով նրանց ունեցուածքը: Այս բոլորի մասին նա գրել է մանրամասնօրէն յիշելով եւ գնահատելով 1,200,000 հոգու նախճիր: Այս թիւը միայն պատկանում է 1915 տարեթւում կատարուած, սակայն ջարդեր տեղի են ունեցել դրանից առաջ եւ յետոյ, որոնք գուժարուելով անցնում են մէկ ու կէս միլիոնից մինչեւ երկու



միլիոնի: Շէյխ Ֆայզ ալ Ղոսէյնի գրքի վերջաբանում բացատրում է իր նպատակը, հայոց հանդէպ կատարուած կոտորածները սարսափելի վայրագութիւններ կոչելով գրում է՝ «Օսմանեան պետութեան կատարած ցեղասպանութիւնը մի ժողովրդի նկատմամբ, որ իր պարտականութիւնները կառավարութեան հանդէպ հաւատարմէն կատարել եւ գոհաբերութիւնից չի խուսափել պատերազմների ժամա-



նակ...ինչո՞ւ պիտի ամենասուկալի անգթութեամբ, իր տեսակի մէջ, չտեսնուած բռնութեամբ, չարչարանքների, տանջանքների եւ յետոյ սպանութիւնների ենթարկուէր: Իմ կարծիքով իսլամական երկրները թող իրենց պարտականութիւնը սեպեն Եւրոպացիներին եւ ի մասնաւորի իսլամի հաւատացեալներին ու աշխարհի մարդկութեան տեղեկացնեն... որ թուրքերի վայրագ արարքը որեւէ աղերս չունի իսլամի եւ չետեւորդների հաւատքի հետ եւ նոյնիսկ թուրքիոյ պետութեան վերաբերմունքը իսլամի նկատմամբ անօրինակ հակասութեան մէջ է գտնուում»: Հեղինակը արդարացի եւ մարդկային ազնիւ մօտեցումով իր մտածելակերպն է արտայայտում վերջաբանում, ուստի մնում է իսլամական երկրներին ճանաչեն եւ դատապարտեն հայոց նկատմամբ իրականացած ցեղասպանութիւնը, հարիւր տարի է չի արուել, յուսով հետեւելով Շէյխ Ֆայզ ալ Ղոսէյնուն նրա արդար եւ մարդկային ցանկութիւնները կ' իրականացնուեն: Մեր քաղաքագէտները, կուսակցական գործիչները մեծ անելիք ունեն այս գործում:

Մեր ներկայացրած գիրքը լաթակազմ է, մէկ կողմում գրքի անունը՝ «Հայոց Արդարութեան Պահանջատիրութիւն» պարսկերէնով է գրուած, միւս կողմում՝ ARMENIAN DEMANDS FOR JUSTICE անգլերէնով, Շէյխ Ֆայզ ալ Ղոսէյնի գերմաներէն տարբերակի պարսկերէնի թարգմանիչ՝ ճարտգ.Նորայր Համբարչեան, ծաւալուն նախաբանի հեղինակ եւ հրատարակիչ՝ դոկտ. Յովհաննէս Յովհաննէսեան: Գիրքը գեղեցիկ ճաշակով պատկերուած է ՄԻՄԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ յուշակոթողով եւ նուիրուած է Շաուլ Ազնաւուրի ծննդեան իննսուն ամեակին եւ նրա ծնողների յիշատակին, որ չարչարանքների են ենթարկուել Օսմանական Ֆաշիստ թուրքիայի բանտերում, նաեւ ի յիշատակ իրանահայ նշանաւոր երաժիշտներ, երգահաններ եւ խմբավարներ՝ Էմանուէլ Մելիք Ասլանեան եւ Ժորա Մինասեան: Պարսկերէնի թարգմանութիւնը պահանջել է երկարատեւ տքնաւոր աշխատանք թարգմանիչի եւ հրատարակչի միջոցով հարազատօրէն նմանուելու գերմաներէնին՝ ինչպէս արաբերէն բնագիրն է եղել:


Հրատարակիչ՝ դոկտ. Յովհաննէս Յովհաննէսեանի (պարսկագիտութեան եւ լեզուաբանութեան դոկտոր) երկարաշունչ ներածականը պարսկերէնով եւ անգլերէնով ինքնին կարելի է համարել ցեղասպանութեան նուիրուած մի արժէքաւոր աշխատասիրութիւն, մանաւանդ պարսկերէն տարբերակը պարսկագէտի հոյակապ իմացութեամբ: Նա խորին շնորհակալութիւններ է յայտնում ճարտգ. Նորայր Համբարչեանին, դոկտ. Նօւրաթ օլլահէ. Զիալիին, գրաֆիստ

Աննօ Սեփանոսեանին, Արմէն Շահբանդարեանին, Արեգ եւ Յովիկ Աբրահամեանին, Նորայր էլսայեանին, դոկտ. Լինա Համբարչեանին, դոկտ. Ժորայր Քոչարեանին, եւ այլ անձնաւորութիւններին գերմաներէն գրքի յայտնաբերման, թարգմանչական, գրաֆիստական եւ տարբեր օժանդակութիւնների համար: Հրատարակիչը նաեւ շնորհակալութիւն է յայտնում տիկ. Փաթրիշիային եւ պրն. Զրալդ թուրքահաններին գրքի տպագրութեան որոշ ծախսերը հոգալու համար:


Ըստ հրատարակչին՝ Յեղասպանութեան մասին այդ գրքի կարիքը պարսկերէնով մեզ քաջալերեց գերմաներէնից թարգմանել եւ հրատարակել նկատելով այս լեզուով գրականութեան պակասը: Յօդուածագիրս կարծիքով գրքի հրատարակիչը նպատակասլաց ցանկութիւններից մղուած տարբեր լեզուներով հաւաքածոն է հրատարակել առ ի տեղեկութիւն թուրքերի պատմութեան եւ կատարած ցեղասպանութեան մասին տարբեր լեզուի ժողովուրդների համար, գովասանքի արժանի ձեռնարկ ապացուցելով իր նուիրուածութիւնը հայ ժողովրդի արդար դատի պահանջատիրութեան: Ինչքան շատ գրուի ցեղասպանութեան մասին եւ յիշեցում կատարուի, հայոց պահանջը կը մնայ անմոռանալի, պարտադրական եւ հետեւողական ու ճակատագրական:

Նախաբանում գրել է հեղինակը՝ «Թուրք ղեկավարները գիտակցում են ցեղասպանութեան իրականութիւնը, սակայն խեղաթիւ-

Շար.ը էջ 19




ՀԲԸՄ
ՍԱԹԱՄԵԱՆ
ԹԱՏԵՐԱՍԻՈՒՄ
AGBU SATAMIAN THEATRE GROUP



ՅՈՒՇ ԵՐԵԿՈՅ

Նուիրուած՝
Տաղանդաւոր Բեմադրիչ-Դերասան



ՊԵՐՃ ՖԱԶԼԵԱՆԻՆ


Կազմակերպութեամբ՝
Հ.Բ.Ը.Մ. Գրիգոր Սաթամեան Թատերախումբի Վարչութեան
Գլխաւոր Բանախօս՝
Յակոբ Վարդիլատեան
(Նիւ Երրգիէն)

ԿԻՐԱԿԻ, 15 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2017-ի • Կ.Ե. Ժամը 7:30-ին

Հ.Բ.Ը.Մ. Վաչէ եւ Թամար Մանուկեան Կեդրոն
Պոյաճեան Սրահին մէջ
2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104

ՍՈՒՏՔԸ ԱԶԱՏ / ԳԻՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ (Համառոտ ակնարկ)



Հոկտեմբեր 2017ին՝ Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի «պաշտօնական հաստատման» 90ամեակին առիթով, բարձաստիճան Եկեղեցականներով եւ շքախումբով Արեւմտեան Թեմ պիտի այցելէ Հայ Առաքելական Եկեղեցւոյ Գերագոյն Հովիւ եւ Քահանայապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Այս առիթով, յարմար նկատուեցաւ մեր ժողովուրդին համառօտ պատկեր մը ներկայացնել Հայ Եկեղեցւոյ «Նուիրապետական Կառուց»ի մասին:

Ինչպէս ամէն հաստատութիւն, Հայ Եկեղեցին ալ, իր գոյութեան առաջին օրերէն, ունեցած է ո՛չ միայն վարչական կառուցուածք, այլ նաեւ «Նուիրապետական կառուցուածք»: Երբ «Նուիրապետութիւն» կամ «Նուիրապետական կարգ» կ'ըսենք՝ կը հասկնանք եկեղեցական պաշտօնեաներու աստիճանական դասակարգութիւնը՝ իրենց տարբեր աստիճաններով եւ պարտականութիւններով: Նուիրապետութեան նպատակն է կառավարել, ուսուցանել եւ առաջնորդել Եկեղեցւոյ հաւատացեալները:

Եկեղեցւոյ Նուիրապետութեան հիմնական աստիճաններն են.՝

- Սարկաւազ (Սարկաւազութիւն),
- Քահանայ (Քահանայութիւն),
- Եպիսկոպոս (Եպիսկոպոսութիւն),

Կաթողիկոս (Կաթողիկոսութիւն):

Սարկաւազը սպասաւորն է Պատարագի Սբ. Սեղանին եւ Պատարագի Հոգեւորականին:

Քահանայն Ձեռնադրուած եւ Օծուած անձնաւորութիւն մըն է, որ իրաւունք ունի Եկեղեցւոյ Սուրբ Խորհուրդները կատարելու (Մկրտութիւն, Սբ. Պսակ, եւ այլն) եւ հովուելու իրեն յանձնուած որոշ վայրի մը հաւատացեալները կամ համայնքը:

Եպիսկոպոսը, Եկեղեցական Թեմի մը (նահանգի մը, շրջանի մը կամ քաղաքի մը) կրօնական Հսկիչն է, Վերատեսուչն է եւ Առաջնորդը: Եպիսկոպոսները իրաւունք ունին Սարկաւազ եւ Քահանայ ձեռնադրելու եւ օծելու, ինչպէս նաեւ եկեղեցական ա՛յլ պաշտօնեաներ (Կիսասարկաւազներ եւ Դպիրներ) օրհնելու եւ ձեռնադրելու, նոր Եկեղեցիներ շինելու եւ օծելու, նոր Մուխեր կամ հովուութիւններ բանալու, սրբապատկերներ օծելու, հաւատացեալ մեր ժողովուրդը առաջնորդելու եւ յատկապէս անոր հոգեւոր-կրօնական-եկեղեցական կարիքները հոգալու:

Կաթողիկոսը կը կոչուի նաեւ Հայրապետ, Եպիսկոպոսապետ, Քահանայապետ: «Կաթողիկոս» եզրը կը նշանակէ «Ընդհանրական», «Տիեզերական»: Կաթողիկոսը Հայ Եկեղեցւոյ բարձրագոյն սպասաւորն է եւ գերագոյն գլուխը, որ կ'ընտրուի Հայ Եկեղեցական եւ աշխարհական ներկայացուցիչներու կողմէ եւ ապա կ'օծ-

ԽՕՍՔԸ Կ'ԱՐՏԱՅԱՅՏԷ ՁԵՐ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Մենք քիչ ուշադրութիւն կը դարձնենք, թէ ինչ ձայներանգով կը խօսինք, ինչ բառեր կ'արտասանենք: Օգտագործելով վիրաւորական ու պարզապէս շատ «աղտոտ» բառեր՝ մենք կարծես մոռցած ենք, թէ ինչ բան է բարեկիրթ ու գեղեցիկ խօսքը: Բայց ատիկա միայն մեր անգրագիտութեան ու գիտակցութեան յետընթացի վկայութիւնը չէ: Միթէ՞ պարզ չէ, որ երբ մենք կոպիտ ու կեղտոտ բառեր կ'ըսենք, մեր հոգիին մէջ հանգիստն ու երջանկութիւնը չեն աւելնար: Լրիւ հակառակը: Մենք հնարաւորութիւն կու տանք, որ մեր հոգիին մէջ բացասական ուժ չառաջանայ, իսկ յետոյ կը դարձանանք, թէ ինչու այդքան յաճախ ստիպուած կ'ըլլանք զխացաւի դեղեր խմել:

Մինչդեռ գիտակցութեան ու խօսքի միջեւ կայ ուղիղ կապ: Եթէ գիտակցութիւնը առողջ է, խօսքն ալ արժանի կ'ըլլայ: Առողջ գիտակցութիւնը միշտ դրական է: Ունենալով նման գիտակցութիւն՝ մենք չենք խօսիր միւսներու թերութիւններուն մասին, չենք քննադատեր, պահանջներ չենք ներկայացներ: Ծակատազիրին մասին չենք բողոքեր: Մեր խօսքը հանգիստ ու բարեացակամ կ'ըլլայ: Նման զրուցակիցի հետ բնականաբար բոլորը հաճոյքով կը շփուին: Իսկ բարկացած խօսիլը հոգիի թուլութեան նշան է:

Ըստ վիճակագրութեան՝ բոլոր վէճերու 90 տոկոսին պատճառը այն է, որ մենք ունենք մէկուն մասին վատ բաներ կը խօսինք: Մենք պէտք է սորվինք խօսիլ հաճելի, բարեկիրթ ձեւով՝ վերահսկելով մեր խօսքը:

Նկատուած են, որ մենք ձեռք

կը բերենք այն մարդու յատկանիշները, որուն մասին կը մտածենք կամ կը խօսինք, ատոր համար ալ եթէ ունէ մէկուն մասին վատ կը խօսինք, մենք այդ մարդու բացասական յատկանիշները մեզի ալ կը վերագրենք:

Եթէ կը գովենք՝ մենք կը ստանանք տուեալ մարդուն բնորոշ դրական յատկանիշները: Նկատենք, որ որքան եսասէր, նախանձող ու անբարեացակամ ենք մենք, այդքան մեզի համար դժուար է ունէ մէկուն մասին ջերմ խօսիլը: Որքան կոպիտ է մեր խօսքը, այդքան աւելի աններդաշնակ ենք մենք, ատոր համար ալ կեանքէն աւելի դաժան դասեր կը ստանանք: Մեր շատ յոգնելու ու քիչ գործ կատարելու պատճառներէն մէկը շատ խօսիլն է: Շատախօսութիւնը դատարկախօսութեան նշան է: Պէտք է խօսիլ քիչ, հանգիստ, համբերատար ու բարեկիրթ: Այդպէս կարելի է եւ ժամանակ տնտեսել, եւ ուժեր:

Կարելոր է սորվիլ վերահսկել խօսքը: Խօսքերը պէտք է իմաստ ունենան, ուժեղ են միայն նման խօսքերը:

Բառերը իմաստ ունին, եթէ անոնք նրբանկատ են ու միւսներու հանդէպ լեցուած են սիրով: Ամէն ինչի մասին պէտք է ճիշդը ըսել, բայց՝ սիրով: Ինչ բառերով ալ, որ մայրը ստիպէ գաւակներուն ընել այս կամ այն բանը, անոր խօսքերը կոպիտ չեն թուիր, քանի որ անոնց մէջ կը զգացուի մայրական սէրը՝ մայրը կը սիրէ մեզ, ան միայն բարիք կ'ուզէ մեզի համար: Եւ ճիշդ այդպէս ալ՝ որքան որ մենք դիպուկ ու կտրուկ չարտայայտուինք, մարդիկ չեն նեղանար մեզմէ, եթէ մենք զթախիտ ըլլանք:

ուր տասներկու Եպիսկոպոսներու կողմէ: Կաթողիկոսը Գերագոյն Պետը եւ ընդհանուր Վերատեսուչն է Հայ Առաքելական Եկեղեցին:

Հայ Եկեղեցւոյ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եկեղեցական ո՛րեւէ Աթոռի կամ Եկեղեցական Իշխանութեան մը չ'ենթարկուիր:

Այս տեսակէտով, Հայ Առաքելական Եկեղեցւոյ Գերագոյն Առաջնորդին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հովուապետական այցելութիւնը Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմ, ունի յատուկ նշանակութիւն օտար այս ափերուն վրայ ապրող Հայութեան համար: Դրական իմաստով նկատի ունենալու ենք, որ մեր

ժողովուրդը կրցած է իւրացնել Քրիստոնէութիւնը: Պատմականօրէն Հայ Եկեղեցին մեծագոյն փաստն է այս դարաւոր երեւոյթին եւ Վեհափառ Հայրապետին Հովուապետական Այցը իր ժողովուրդին՝ հարազատ արտայայտութիւնն է, որ Քրիստոնէական Կրօնք եւ Հայ Եկեղեցի մեծագոյն փաստերն են Հայ ժողովուրդի Հաւատքին, կրօնական համոզումներուն եւ ազգային գոյատեւումին:

Ի վերջոյ, «Եկեղեցին» այն չէ, որ նիւթապէս կը շինենք (չէնքը), այլ այն «հոգեւոր» իրականութիւնը, որով մենք մեզ հաւատքի վրայ կը կառուցանենք: Տ. Մ. Վ. ԵԱՐՏԸՄԵԱՆ

LIFE INSURANCE INDIVIDUAL & GROUP HEALTH INSURANCE LONG TERM CARE MEDICARE DENTAL & VISION DISABILITY

M MARONIAN
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

Call us today!

(818) 500 9585
(818) 269 0909

Bedros & Siamanto
805 EAST BROADWAY, GLENDALE, CA 91205

CA Insurance Lic. #0494056 / #0C99815
MARONIANINSURANCE.COM

ՀՈԳԵՅԱԼԳԻՍ



ԿԻՐԻ ՍԻՆԱՆԵԱՆ

Հանգուցեալ Կէրի Սինանեանի մահուան առաջին տարելիցին առթիւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի հանգուցեալի շիրիմին մօտ, Կիրակի 15 Հոկտեմբեր, 2017 կէսօրէ առաջ ժամը 11:30ին, Հովիվուտի Ֆորեսթ Լոն գերեզմանատան մէջ:

Խնդրողներն են՝

Այրին՝ Սիլվան Սինանեան եւ որդին Սամուէլ

Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Մայք Սինանեան

Հոգեճաշ պիտի մատուցուի Հովիվուտի «Նայիրի» սրահին մէջ:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Իրաւաբան ՎԱՐԴԳԻՍ ԵՂԻԱՅԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հայկական Կրթական Բարեխրական Միութիւնը (Հ.Կ.Բ.Մ.) իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի այրիին եւ ընտանեկան համայն պարագաներուն:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Իրաւաբան ՎԱՐԴԳԻՍ ԵՂԻԱՅԵԱՆԻ մահուան տխուր առիթով Յովհաննէս Պալաչեան իր խորագրաց ցաւակցութիւնը կը յայտնէ ազգային հասարակական ծանօթ գործիչի այրիին, զաւակներուն եւ համայն պարագաներուն:

Առ այդ փոխան ծաղիկեպսակի \$100 տուար կը նուիրէ «Մասիս»ին:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ՊՕՂՈՍ ՓՈՒԼՏԵԱՆԻ մահուան տխուր առիթով (մահացած Պէյրութ) «Մասիս» շաբաթաթերթի վարչութիւնն ու խմբագրութիւնը իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Կիրեղ եւ Շողիկ Մանկրեանին:

80 ՄԼԻՆ Դրամ՝ Մէկ Օրուայ Համար

Շարունակուած էջ 2-էն

տութիւն» ու/կ-ի հետ գրոյցում Երեւանի փոխքաղաքապետերից Արամ Սուքիասեանն ասել է, թէ նախորդ տարի մայրաքաղաքի տօնի համար նախատեսուած է եղել ծախսել 130 մլն դրամ, սակայն ծախսուել է դրա կեսը. պատճառը ապրիլեան քառօրեայ պատերազմն էր, եւ քաղաքապետարանը որոշել է գումարի մի մասն ուղղել ապրիլեան պատերազմում վիրաւորուած, հաշմանդամութիւն ձեռք բերած զինուորների ու ազատամարտիկների ընտանիքներին, որ-

պէս սոցիալական աջակցութիւն: Այսինքն՝ նախորդ տարիներին հնարաւոր է եղել աւելի համեստ միջոցառումներ կազմակերպել, աւելի քիչ գումարներ ծախսել, բայց իշխանութիւնները չեն արել, ընդհակառակը՝ տարեցտարի միայն աւելացրել են տօնական գումարները: Չեն արել, որովհետեւ իրենց համար պետութիւնը դիտարկում են որպէս սոսկ հարստութիւն դիզելու եւ սեփական հաճոյքներին հազուադ տալու հնարաւորութիւն:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ»

Յայտարարեց ու Բոլորին Գցեց Կրակը

Շարունակուած էջ 2-էն

զալիք տարի չի նախատեսուած ո՛չ թօշակների, ո՛չ նպաստների, ո՛չ էլ աշխատավարձի աճ: Նուազագոյն աշխատավարձը հանրապետութիւնում արդէն 3-րդ տարին անընդմէջ 55 հազար դրամն է: Փոխարէնը պաշտօնական հաշուետուութիւններում արձանագրուած է համատարած գնաճ, առաջին սպառման բոլոր ապրանքների համար, իսկ գալիք տարուայ համար կանխատեսուած է գների աւելի մեծ աճ:

Համաձայնուէք, որ նման պայմաններում Արտեմ Ասատրեանից գեղարուեստական մեծ երեւակայութիւնն ու ֆանտազիա էր պահանջում՝ հիմնաւորելու, թէ այդ ինչպէս է ՀՀ բնակչութիւնը դառնալու 4 մլն՝ թէկուզ եւ 23 տարի անց: Արտեմ Ասատրեանի ֆանտազիան այդ պահին բաւարարել է ասելու, որ իրենք ունեն ինչ-որ վերլուծութիւն՝ բնակչութեան թիւը աւելացնելու: Բա որ ունէք, ինչո՞ւ էք գաղտնի պահում՝ ասէ՛ք՝ մենք էլ իմանանք:
«ՀԱՅԵԼԻ»

«ՀԱՅՈՑ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՅԱՆՁԱՏԻՐՈՒԹԻՒՆ»

Շարունակուած էջ 15-էն

ընթացում պատմութիւնը անճիշտ մեկնաբանութիւններ են կատարում, մերժելով եւ ժխտելով կատարուածը: Երբ 1925-ի շուրջ Աթաթուրքը նոր իշխանութիւն-պետութիւն հիմնեց՝ առանց կրօնի միջամտութեան իշխանութեան կառավարման գործում, իբր արեւմուտքի նմանութեամբ ժամանակի հասարակական օրէնքների ու կանոնների դերակատարութեամբ: Նրա առաջին քայլը եղաւ փոխել արաբական տառերը արեւմտեան լատիներէնի, որով 600 տարիների բազմահազար գրութիւններ եւ փաստաթղթեր մարդկանց աչքից անհետացան, այսպիսով թուրքիան իր անցեալի պատմութեան հետ աչք փակեց, կապը խզեց, ուստի երբ մի ժողովուրդ իր անցեալի մասից անտեղեակ մնայ, անցեալից հիմք-արմատ չունենայ, այս ժողովուրդը ինչպէ՞ս կարող է արդար ղեկավարման իշխանութիւն ունենալ, երբ անցեալի պատմութիւնը արխիւացնուած է, կոտորածներով, ուժով կրօնափոխութեան ու ջարդերով է տեղի ունեցել օտար ազգութիւնների՝ հայերի, յոյների, ասորիների, բուլղարների, ռուսախոսների եւ այլոց նկատմամբ: Հրատարակչի նախաբանում կարուած ենք թուրքիայի պատմութիւնից հատուածներ, համառօտ ու սեղմ տողերում, ջարդ ու կոտորածով թուրքերը տիրում են օտարների հայրենի բնօրրաններին, կեղեքելով ու թաւանելով, բռնութեամբ եւ ճնշումներով օսմանեան կայսրութեան հիմնում, առաջին աշխարհամարտի դաշնակիցներից չարաչար պարտութիւն կրելով սահմանափակուած են յոյների եւ հայերի պայտեական տարածքներում, իբր թէ հայերը որպէս բրիտանեաներ կարող է վտանգ սպառնան իրենց, ուստի երիտասարդ թուրքերի՝ իթթիհատ վէ թերաքըր կուսակցութեան գաղտնի եւ ծրագրուած որոշումներով տեղահանում են հայութեան ճանապարհներին նրանց ամենաքստմենքի եղանակներով կոտորում... Ջարդում եւ տէր կանգնում նրանց պայտեական երկրին եւ ունեցուածքին: Թուրքերի չարաչար պարտութիւնից յետոյ անգլիացիները ղապտարան է կազմուած դատելու ջարդերի մեղսակիցներին, ինչ դատարան, ղեկավար ջարդարարները փախուստ են տալիս, իսկ մի քանի անկարելուներին մահուան դատապարտում: Ամօթանք էր հայ ժողովրդի համար ղեկավար ջարդարարների փախուստը՝ ողջ մնալը, ուստի կեանքի է կոչուած վրիժառութեան գաղտնի խումբը՝ «Նեմեսիսի գործողութիւն» անունով, երիտասարդներ բիւրաւոր նահատակների արեան կանչով ողբակոչուած կատարում են ջարդարարներ-

րի սպանութիւնը տարբեր քաղաքներում շնասատակ անելով նրանց մաղձով ու թոյնով լի հայատեաց լաշը տարբեր երկրների ասֆալտի վրայ տապալելով: Այս մասին բաւական գրքեր եւ վկայութիւններ են գրուել, ինչպէս հերոսներից Արշաւիր Շիրակեանի՝ «Կտակն էր նահատակներուն», Սողոմոն Թեհմալիարեանի դատաւարութեան մասին եւ շատ ուրիշ արժէքաւոր գրքեր:

Նախաբանում այնքան մտքեր եւ տեղեկութիւններ են արծարծուած, որոնց մասին ցանկութիւն կար գրելու, սակայն ներողամտութեամբ առաջարկուած ենք գիրքը անպայման ունենալ, նա կարելու տեղեկութեանց եւ պատմական աղբիւր է: Այս գիրքը նաեւ հոյակապ նուէր կը լինի ձեր օտար ազգի բնակիչների եւ բարեկամների համար:

Յաջողութիւն եւ քաջառողջութիւն գրքի բոլոր մասնակիցներին ի մասնաւորի հրատարակչի՝ դոկտ. Յովհաննէս Յովհաննէսեանին առաւել սպասելի իր գիտութիւնը, ի սպաս դնելու ցեղասպանութեան պահանջատիրութեան ճանապարհին:

Բանի վարպետ, խօսքը մարգարէական հայոց անմեղ ժողովրդի ցեղասպանութիւնը կատարած ոտխ թուրքին ուղղուած հայոց անմահ բանաստեղծ վահան Թէքէեանի բանաստեղծութիւնը ինդրանքով տպուի յօդուածի հետ:

Շնորհակալութիւն՝ Ռ. Կորիւն

Պիտի իյնաս

Գրեց՝ Վահան Թեքեան

Պիտի իյնաս այս անգամ, եւ ալ ի սպառ անյարիր, Պիտի մնաս գետնին վրայ՝ ճանկուտելով հողը դեռ, Ու դեռ երկար չմեռնիս պիտի, եւ տունդ միտի, Եղած՝ ծածկե պիտի քեզ, երբեմնի տունդ եռուզեռ...

Յերիք որչափ աշխարհի ցաւ ու չարիք հասուցիր, Որքան ի սուգ թաթխեցիր քաղաք ու գիւղ, դաշտ ու լեռ. Յերիք մայրերը լացին բոյներուն վրայ ցանուցիր, Եւ մեր սիրող սրտերուն մէջ լեցուցի՜ր ոխ իւ հեռ...

Պիտի իյնաս, կ'իյնաս ալ... բայց որպէզի դեռ ճանչնաս Քու անարգ սիրտը ծակող մեծագոյն ցաւը վերջին՝ Պիտի գարնն քեզ անոնք որ քեզ յաճախ փրկեցին...

Ու չմեռած դեռ տեսնե՛ս պիտի՝ արդար պատուհաս, Օարկիլը մեր աշխարհին գորթուցիր աւերակ, Ու ցնծութիւնը մերին՝ բու ստրուկի աչքիդ տակ...:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով հեռաձայնել՝ (626) 398-0506

«Բարսելոնան» Մեծ Հաշուով Յաղթեց Դատարկ Ստադիոնում Անցկացուած ՏՃային Խաղում



Ֆուտպոլի Սպանիայի առաջնութեան 7-րդ տուրում «Բարսելոնան» սեփական դաշտում 3 անպատասխան գնդակ ուղարկեց «Լաս Պալմասի» դարպասը:

Բոլոր կուրերը գրանցուեցին ընդմիջումից չետոյ: Հանդիպումն անցաւ առանց հանդիսականների: Հոկտեմբերի 1-ին անցկացուած էր Կատալոնիայի անկախութեան հանրաքուէի քուէարկութիւնը, ինչի պատճառով քաղաքում անկարգութիւններ են տեղի ունեցել: Պրիմերայի ղեկավարութիւնը որոշել է խաղն անցկացնել առանց հանդիսականների: Մադրիդն անօրինական է համարում է Կատալոնիայի անկախութեան հանրաքուէի անցկացումը:

«Մանչեսթեր Եունայթեդի» 2 Յաղթանակները՝ Առանց Խնդիրների

Ֆուտպոլի Անգլիայի առաջնութեան 7-րդ տուրում «Մանչեսթեր Եունայթեդը» սեփական դաշտում 4 անպատասխան գնդակ ուղարկեց Լոնտոնի «Քրիսթալ Փելասի» դարպասը: Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանն ընդ-



գրկուել էր ժողջ Մոուրիսիոյի գլխավորած թիմի մեկնարկային կազմում: «Մանչեսթեր Եունայթեդն» ակտիւ սկսեց խաղը եւ խփեց արագ կոլ: Երրորդ րոպէին անգլիացի Մարկուս Ռեշֆորդի տպաւորիչ անցումից ու փոխանցումից յետոյ աչքի ընկաւ Խուան Մատան: Հաշիւը 35-րդ րոպէին կրկնապատկեց բելգիացի կիսապաշտպան Մարուան Ֆելաինին, որը երկրորդ խաղակէսի սկզբնամասում դարձաւ նաեւ դուբլի հեղինակ: Հենրիխ Մխիթարեանը փոխարինուեց 66-րդ րոպէին, բայց դա «Մանչեսթեր Եունայթեդին» չխանգարեց խփել նաեւ չորրորդ կոլը: 85-րդ րոպէին հանդիպման վերջակետը դրեց բելգիացի յարձակուող Ռոմելու Լուկակուն:

Ֆուտպոլի եւրոպական Չեմպիոնների լիգայում «Մանչեսթեր Եունայթեդը» Մոսկուայում 4:1 հաշուով յաղթեց ԲԿՄԱ-ի: Անգլիական թիմի մեկնարկային կազմում էր Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը, որը 50-րդ հանդիպումն անցկացրեց «Մանչեսթեր Եունայթեդը»:

Հայ ֆուտպոլիստը դարձաւ գոլի հեղինակ: Երկրորդ կոլը խփեց ֆրանսացի Անտոնի Մարտիալը, որը իրացրեց Հենրիխ Մխիթարեանի վաստակած 11 մետրանոցը: Դուբլի հեղինակ դարձաւ բելգիացի Ռոմելու Լուկակուն: «Մանչեսթեր Եունայթեդը» Ա խմբի առաջատարն է՝ 6 միաւորով: Շուեյցարական «Բազելն» ու ԲԿՄԱ-ն ունեն 3-ական միաւոր:

«Բաւարիայի» Անյաջողութիւնները Շարունակուում Են

Գերմանական Բունդեսլիգայի 7-րդ տուրում Միւնխենի «Բաւարիան» Բեռլինում մարտական ոչ ոքի խաղաց «Հերտայի» հետ՝ 2:2: Երկրորդ խաղակէսի սկզբնամասում միւնխենցիները ստացել էին 2 կոլի առաւելութիւն, սակայն չկարողացան պահպանել այն:



«Բաւարիան» հաւաքեց 14 միաւոր եւ հաւասարուեց երկրորդ տեղում գտնուող «Հոֆենհայմին», որը 2:3 հաշուով պարտուեց «Ֆրայբուրգին»: Առաջատար Դորտմունդի «Բորուսիան» ունի 19 միաւոր:

«Բաւարիան» առաջին խաղն անցկացրեց թիմի նախկին գլխավոր մարզիչ Կարլո Անչետտիի հեռացումից յետոյ:

Հայաստանի Ծանրամարտի Ֆեդերացիան Որակագրկուեց Սէկ Տարով

Ծանրամարտի միջազգային ֆեդերացիայի գործադիր կոմիտէն մէկ տարով կասեցրել է 9 երկրների ազգային ֆեդերացիաների հետ համագործակցութիւնը: Այդ մասին յայտնում է ռուսական «Սպորտ էքսպրես» թերթը:

Դա նշանակում է, որ այդ երկրների ծանրորդներն իրաւունք չունեն մասնակցելու առաջիկայում ԱՄՆ-ի Անահայմ քաղաքում կայանալիք աշխարհի առաջնութեանը:

Պատժուած երկրների թւում է յայտնուել նաեւ Հայաստանը: Ծանրամարտի միջազգային ֆեդերացիան դեռեւս չի յայտնել, թէ որ օրից է սկսուած որակագրկումը եւ երբ է այն աւարտուելու: Սակայն փաստն այն է, որ նախկինում առանձին մարզիկների կողմից ձախողած դոպինգ ստուգման պատճառով այսօր պատժուած է ամբողջ հաւաքականը, որը, ինքնին, տրամաբանական է:

Հայաստանից բացի մէկ տարով որակագրկուել են նաեւ Ռուսաստանի, Բելառուսի, Ուկրաինայի, Չինաստանի, Մոլդովայի, Ղազախստանի, Թուրքիայի եւ Ադրբեյջանի ֆեդերացիաները:

Լեւոն Արոնեան. Փորձում Ենք Ընտանեկան Կեանքի Դժուարութիւնները

Նախօրէին ֆիլիպինցի Արիանա Կայոլիէի հետ ամուսնացած Լեւոն Արոնեանը գրառում է կատարել ֆեյսբուքեան էջում:



«Տիկինն ու պարոնը փորձում են ընտանեկան կեանքի դժուարութիւնները», - գրել է հայկական շախմատի առաջատարը՝ տեղադրելով լուսանկար:

Չոյգի պսակադրութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Սեպտեմբերի 30-ին Սաղմոսավանքում: Հարսանիքի քաւորն էր Հայաստանի նախագահ, Հայաստանի շախմատային ֆեդերացիայի նախագահ Սերժ Սարգսեանը:

Օրեր առաջ հայ գրոսմայստերն արժանացել էր Թբիլիսիում անցկացուած աշխարհի գաւաթի խաղարկութեան յաղթողի կոչմանը եւ նուաճել նաեւ աշխարհի ախոյեանի յաւակնորդների մրցաշարի ուղեգիր: Դրանից յետոյ Արոնեանը Շախմատի միջազգային ֆեդերացիայի (ՖԻԴԵ) դասակարգման աղիւսակում առաջադիմեց 2 աստիճան եւ բարձարցաւ երկրորդ տեղ:

Մոսկուայի «Արարատը» Կամային Յաղթանակ Տարավ

Ֆուտպոլի Ռուսաստանի երկրորդ դիւբլիոնի առաջնութեան «Կենդրոն» գոտու մրցաշարի 11-րդ տուրում Մոսկուայի «Արարատը» հիւրընկալուելիս 2:1 հաշուով կամային յաղթանակ է տարել Մոսկուայի «Ստրոգինոյի» նկատմամբ:

Դաշտի տերերը հաշիւը բացել են 8-րդ րոպէին, սակայն առաջին խաղակէսում «Արարատը» ռուս կիսապաշտպան Ալեքսէյ Ռեբկոյի եւ Ռուսաստանի հաւաքականի նախկին յարձակուող Ռոման Պավլիչենկոյի կոլերի շնորհիւ առաջ է անցել հաշուի մէջ եւ պահպանել առաւելութիւնը մինչեւ խաղի աւարտը:

«Արարատը» 29 միաւորով գլխավորում է մրցաշարային աղիւսակը եւ 8 միաւոր գերազանցում է երկրորդ տեղում ընթացող Մոսկուայի «Տորպեդոյին»:

ՖԻՖԱ-Կ Սպանիայի Հաւաքականին Կարող է Չրկել ԱԱ-2018-ի Մասնակցութեան Իրաւունքից

ՖԻՖԱ-ն ֆուտպոլի Սպանիայի հաւաքականին կարող է զրկել աշխարհի 2018թ. առաջնութեան եզրափակիչ մրցաշարի մասնակցութեան իրաւունքից, եթէ Պրիմերայի ղեկավարութիւնը Կատալոնիայի անկախացումից յետոյ «Բարսելոնային» թոյլ չտայ մասնակցել Սպանիայի առաջնութեանը, գրում է Marca-ն:

ՖԻՖԱ-ն դա կարող է համարել երկրի կառավարութեան միջամտութիւն ֆուտպոլի ֆեդերացիայի գործերին: Այդ դէպքում ազգային հաւաքականը կը զրկուի պաշտօնական խաղերի մասնակցելու իրաւունքից, իսկ ակումբները՝ ՖԻՖԱ-ի հովանու ներքոյ անցկացուող մրցաշարերում հանդէս գալուց:

H.M.M. SOCCER TEAMS NEXT GAME SCHEDULE

HOMENMEN SAHARA TEAM

- Sunday 10/8/17 12:50 pm Homenmen Sahara VS School Boys Utd
Mar Vista Recreational Center 11430 Woodbine Avenue, Los Angeles

HOMENMEN ANGEL TEAM

- Sunday 10/8/17 1:45pm Homenmen Angel VS Glendale Heat
Rio De LA 1900 N. San Fernando Road Los Angeles 90065